



20(378)  
10.07.2014

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխավոր, իմանալ զբանս հանճարով

# ԼՍՄՄՄՄՄՄ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ. ԲՈԼՈՆԻԱՅԻ ՇԱՄԱՏԵՐԱՏՈՒՄ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՎ

Հունիսի 27-29-ը Ստեփանակերտում անցկացվեց միջազգային համաժողով՝ «Կրթություն առանց խտրականության. Բոլոնիայի համատեքստում» թեմայով: Կազմակերպիչներն էին ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը և Արցախի պետական համալսարանը: Նպատակն էր մեկ անգամ ևս կարևորել կրթության՝ որպես մարդու հիմնարար ազատության և իրավունքի իրականացումն ինչպես միջազգայնորեն ճանաչված, այնպես էլ չճանաչված պետությունների համար, վերահանել բարձրագույն կրթության հիմնահարցերը չճանաչված երկրներում: Մասնակիցների կազմը ներկայացուցչական էր. միջազգային փորձագետներ, հետազոտողներ, արտերկրի պետական և հասարակական գործիչներ, ԼՂՀ և ՀՀ կրթական համակարգի ներկայացուցիչներ, նախարարներ, բուհերի ղեկավարներ: ԼՂՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում անցկացված համաժողովին մասնակցում էր Արցախի խորհրդարանի նախագահ Աշոտ Ղուլյանը:



առնչվող հիմնախնդիրների, դրանց լուծման տարբերակների և մեր հանրապետությունում հաջողված մոտեցումների կիրառման հեռանկարների մասին:

Արցախում հատուկ տեղ է հատկացվում այս կարևորագույն հարցերին՝ հատկապես հաշվի առնելով կրթության ու գիտության նշանակությունը մեր երկրի և ժողովրդի կյանքում: Կրթության ոլորտը համարվում է մեր պետության զարգացման ռազմավարական առանցքային ուղղություններից մեկը: Արցախի անենամեծ հարստությունը մեր ժողովրդի մտավոր ներուժն է, որի զարգացումը և հետևողական կատարելագործումը մեծապես կախված են քաղաքակիրթ հանրության հետ կրթության ոլորտում կայուն կապում և գործնական շփումների հաստատումից ու պահպանումից: Այսպիսի տեսլականը լիովին համապատասխանում է նաև միջազգային նորմերին, քանի որ որակյալ և անհատի բազմակողմանի զարգացմանը նպաստող կրթությունը հանդիսանում է երկրի առաջընթացի, մարդու հիմնարար իրավունքների և ժողովրդավարության կարևորագույն բաղադրատարրերից մեկը:

Համոզված են, որ համաժողովն արդյունավետորեն կլուծի իր առջև դրված խնդիրները և օգտակար ազդեցություն կունենա մեր հանրապետությունում կրթության զարգացման գործընթացի վրա:

Բոլոնիայի գործընթացի քարտուղարությունը երկու տարի է, ստանձնել է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի: Այն հանգամանքը, որ այդ գործն առաջին անգամ վստահվել է ոչ եվրոպական միության երկրի՝ բավականին խոսուն փաստ է ՀՀ-ում կրթությունը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ կատարվող քայլերի:

ՀՀ ԿԳ նախարարը ներկայացրեց Հայաստանի փորձը Բոլոնիայի գործընթացում, 2005 թվականից իրականացվող կրթական բարեփոխումները, արդյունավետությունը և ծագած խնդիրները: Նա մեկ անգամ ևս պատրաստակամություն հայտնեց մասնագիտական, կառավարչական և այլ հնարավորություններն ի սպաս դնելու ԼՂՀ բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, այդ թվում, Բոլոնիայի գործընթացին: Նրա խոսքով, Բոլոնիայի գործընթացը

րություններ ստեղծելու, նոր դոմեր բացելու մեխանիզմներով: Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մաս հանդիսանալով՝ Հայաստանն իր ուսումնական հաստատություններով, հայաստանյան ուսանողներն ու մասնագետներն ստացել են աննախադեպ լայն հնարավորություններ՝ մասնագիտական կրթությունը շարունակելու եվրոպական լավագույն ուսումնական հաստատություններում, աշխատելու եվրոպական տարբեր մարմիններում, իսկ մեր բուհերն ստացել են աննախադեպ հնարավորություն միջազգային առումով: Այս գործընթացն, իհարկե, կարևոր է, որովհետև եվրոպական կրթական տարածքը ոչ այնքան միասնական դիպլոմների ու որակավորումների տարածք է, որքան՝ միասնական արժեհամակարգի:

քում, նույնպես կարող է օգտակար լինել այն բոլոր ուսումնական հաստատություններին, որոնք կարիք ունեն բարեփոխվելու և ընդհանուր եվրոպական կրթական տարածքի մաս դառնալու: «Երբ խոսում ենք եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մասին, նկատում ենք, որ այդ տարածքում դեռևս կան, այսպես կոչված, սև բծեր», - ասաց նա: Դրանք այն տարածքներն են, այն չճանաչված պետություններն են, որտեղ ապրում են հազարավոր մարդիկ, որտեղ երիտասարդները հաճախում են բարձրագույն ուսումնական հաստատություններ, սակայն նրանց կրթության իրավունքի լիարժեք իրագործման հետ կապված, ծագել են իրավական խոչընդոտներ, ինչը միջազգային և եվրոպական՝ Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված բազմաթիվ փաստաթղթերի անընդունելի իրողություն է և խոչընդոտ՝ իրենց կրթական իրավունքների ճանաչման համար:

Ա. Աշոտյանի ձևակերպմամբ՝ այս համաժողովի նպատակը քաղաքական չէ, համաժողովի նպատակը հումանիտար է՝ խարսխված մարդու հիմնարար ազատությունների և իրավունքների վրա: Նա չքաքցեց, որ ՀՀ-ն սատարել և սատարելու է ԼՂՀ-ին՝ իր կայացման և ճանաչման բոլոր ուղղություններով, այդ թվում՝ բարձրագույն կրթության ոլորտում՝ շեշտելով, որ ԼՂՀ-ում և ՀՀ-ում գերագույն արժեքը մարդն է: Մարդ, որ իր ինտելեկտուալ հնարավորությունների բացահայտման համար չունի ավելի լավ գործիք, քան ժամանակակից կրթության հնարավորությունները: Նախարարի գնահատմամբ, համաժողովն աննախադեպ և պատմական իրադարձություն է, որովհետև այս տարիների ընթացքում ոչ մի չճանաչված և ճանաչված պետությունում, միջազգային, եվրոպական կառույց երբևէ այս լրջությամբ և բարձր մակարդակով չի զբաղվել չճանաչված պետություններում կրթության իրավունքի լիարժեք իրագործման խնդիրներով: Եվ այդ առումում վստահություն հայտնեց, որ այն փաստաթուղթը, որ ընդունվելու է քննարկումների արդյունքում, դառնալու է առաջին և հիմնարար փաստաթղթերից մեկը և կկոչվի Ստեփանակերտի դեկլարացիա, որը թույլ կտա Արցախի և չճանաչված մյուս երկրներում ապրող բոլոր երիտասարդների համար, իրենց շահագրգիռ կողմերով հանդերձ, ստեղծել առավել մեծ հնարավորություններ՝ ապագայում իրենց ուսումնական հաստատությունների արդիականացման, միջազգային ծրագրերում ընդգրկման և այս պետություններում ապրող յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքի լիարժեք իրականացման համար: Իր հերթին նա շնորհակալություն հայտնեց արտասահմանյան փորձագետներին՝ հրավերն ընդունելու և կազմակերպիչներին՝ համատեղ ջանքերով այս կարևոր նախաձեռնությունը կյանքի կոչելու համար:

Համաժողովի աշխատանքներն ընթացան երեք միստերով: Առաջին միստի թեման էր՝ «Կրթությունը՝ որպես մարդու հիմնարար իրավունքների և ժողովրդավարական արժեքների մաս»: Այն վարեց ԼՂՀ ԿԳ նախարար Ալա Ասրյանը:



եվրոպական մի ֆենոմեն է, որի հիմնական նպատակը եղել է Եվրոպական տնտեսական գոտու սպասարկման համար ունիֆիկացված միասնական մեխանիզմներով երիտասարդ կադրերի ստեղծումը: Այնուհաստ է, որ մեր երկրները, այդ թվում՝ բազմաթիվ ճանաչված պետություններ, որոնք կանգնում են Բոլոնիայի գործընթացի ուղղում, չեն հանդիսանում եվրամիասնական տնտեսական շուկայի բաղկացուցիչ մաս: Այս դեպքում հարց է ծագում՝ ի՞նչն է դրդել մեզ՝ միանալու մի գործընթացի, որի նպատակահարմարությունն առաջին հայացքից մեզանում բացակայում է: «Նախ և առաջ, մենք առաջնորդվել ենք մեր երիտասարդ սերնդի համար այս փոքրացող, բայց գլոբալիզացվող աշխարհում նոր հնարավոր

եվրոպական արժեհամակարգ, որը խարսխված է քրիստոնեադեմոկրատական արժեքների, մարդու արժանապատվության և այլ արժեքների վրա, որոնք թույլ են տալիս եվրոպական մայր ցամաքում կառուցել բարգավաճող և խաղաղ հասարակություն», - ասաց Ա. Աշոտյանը: Հայաստանի փորձը Բոլոնիայի գործընթացում բավականին մեծ է: 2012թ. Հայաստանը առաջին ոչ եվրոպական միության անդամ երկրների շարքից ընտրվեց որպես Բոլոնիայի գործընթացի քարտուղար երկիր: Աննախադեպ իրողություն, եվրոպական միության ճանաչման ակնառու քայլ: ՀՀ ԿԳ նախարարի խոսքով՝ Հայաստանի փորձը, որ կուտակվել է քարտուղարության երկու տարվա ընթաց



ՀԱՄԱԺՈՂՎ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ. ԲՈՒՆԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**1** Ձեկուցումներով հանդես եկան Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաառարակագիտական համալսարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի վարիչ Տիգրան Թորոսյանը, Սեօ Բրիտանիայի էստեթ համալսարանից Ռայներ Շուլցը, Բասկոնիայի պետական համալսարանի պրոֆեսոր, Ազգային փոքրամասնությունների հարցերով փորձագետ Ինիգո Ուրուտիան, ԱյֆիեսՍի քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի տնօրեն Յովիաննես Գրիգորյանը, ԱՄՆ Սթոնհիլ քոլեջի դասախոս Աննա Օհանյանը: «Կիև-Մոզիլյանսկի ակադեմիա» (Ուկրաինա) ազգային համալսարանի ներկայացուցիչ Աննա Խվորոստյանկինայի ելույթը ցուցադրվեց տեսանյութով:



Որքանով է հնարավոր ԼՂՀ և մյուս չճանաչված երկրների երիտասարդների համար համահավասար կրթական իրավունքի ապահովումը եվրոպական միասնական տնտեսական գոտում:



Տիգրան Թորոսյանը իր զեկուցման մեջ արծարծեց այս հարցերը՝ մի կողմից մատնանշելով միջազգային կոնվենցիաները, մյուս կողմից՝ ծագած խնդիրները: Հարցին նայելով բոլոր կողմերից՝ բանախոսն այն եզրահանգում արեց, որ չճանաչված երկրներում պետություններում առկա են էական առանձնահատկություններ ու դժվարություններ Բոլոնիայի գործընթացում լիարժեք ընդգրկվելու համար, սակայն առկա են նաև լուրջ հնարավորություններ բարձրագույն կրթության եվրոպական տարածքին ինտեգրվելու, դրա արդյունքները պետականության կայացմանը և հակամարտությունների լիարժեք լուծմանը ի նպաստ օգտագործելու համար:



Բանախոսներն իրենց ելույթներում կարևորեցին յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը՝ առանց ազգային, կրոնական, ռասայական, սեռական խտրականության:



ԱՄՆ Սթոնհիլ քոլեջի դասախոս, փորձագետ Աննա Օհանյանի համոզմամբ՝ կրթությունն այն գործիքն է, որը կարող է մեխանիզմներ առաջարկել խաղաղության հասնելու, տարբեր տեսակի կոնֆլիկտներ լուծելու համար: Բոլոնիայի գործընթացի դուրս թողնելով չճանաչված երկրները՝ եվրամիությունը փաստորեն կորցնում է այն ուղին, որով կարող է հասնել այդ երկրներում խաղաղության: Նա չնայած կողմ է, որ ԼՂ-ն անդամակցի Բոլոնիային, միաժամանակ մշտեց, որ այն նաև հակակարծիք տարրեր է պարունակում, որոնք կարող են ներսում խնդիրներ առաջ բերել, և շատ ժամանակ է պահանջվում, որ դրանք լուծում ստանան: Բոլոնիայի կողմնակիցները վերաբերում են նրան, որ երկիրը հակամարտությունից հետո չունի այն կառուցվածքները, մարդկային ռեսուրսները, որ կարողանա լայն չափով այդ բարեփոխումներն իրականացնել: Բայց միևնույն ժամանակ երկար սպասելը բարեփոխումների իրականացման հարցում կարող է նոր բռնությունների պատճառ դառնալ: Դրա համար պետք է գործընթացն սկսել ունեցածով: Ինչ վերաբերում է կրթության ասպարեզում տարածաշրջանային կառավարմանը, չճանաչված պետություններին բացառելը ոչ միայն թողնում է այդ բացը տարածաշրջանում, այլև այս ժողովուրդների մոտ պոտենցիալ է թողնում, որպեսզի հակամարտությունը նորից սկսվի:

Եթե կրթական բարեփոխումներն իրականություն դառնան ԼՂ-ում, դա պետք է նաև տարածաշրջանում լինի, որովհետև շատ դժվար կլինի, որ ԼՂ դպրոցներում անցկացվեն խաղաղության մասին դասընթացներ, եթե նույնը չի արվում Ադրբեջանում կամ Աբխազիայում: Այնպես որ, տարածաշրջանային ուղղվածությունը շատ կարևոր է այս նպատակին հասնելու համար. այս կարծիքին է փորձագետը:

Համաժողովի երկրորդ նիստը նվիրված էր չճանաչված երկրներում բարձրագույն կրթության հիմնահարցերին: Այն վարում էր ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Կարինե Հարությունյանը: Բոլոնիայի քարտուղարության ղեկավար Գայանե Հարությունյանը տեղեկատվություն տվեց գործընթացի պատմության և Հայաստանի փորձի մասին: Ապա ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը և Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության կրթության նախարար Ս. Ֆադեևան ներկայացրին իրենց երկրներում բարձրագույն կրթության հիմնահարցերը: Վերջինս, ի դեպ, բարի նախանձով արտահայտվեց այն աջակցության մասին, որ ստանում է ԼՂՀ-ն Հայաստանից:

Մերձդնեստրի պետական համալսարանի հիմնախնդիրներին անդրադարձավ ղեկավար Ստեփան Բեռիլը:

Երրորդ նիստը նվիրված էր համաժողովի Հռչակագրի ընդունմանը: Քննարկումն անցավ գործնական մթնոլորտում: Առաջարկները հիմնականում խմբագրական բնույթի էին: Հռչակագրի զխմբագրող գաղափարն այն է, որ քաղաքական խնդիրներն ու չկարգավորված կոնֆլիկտները չպետք է խոչընդոտ դառնան բազմաթիվ միջազգային կոնվենցիաներով սահմանված մարդու հիմնարար ազատությունների ապահովման ճանապարհին, իսկ կրթությունն այս համատեքստում ունի առաջնային նշանակություն:

Նիստերին եղան ելույթներ, հնչեցին հարց ու պատասխաններ:

Համաժողովում եզրակացվեց խոսքով հանդես եկավ ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Արտուր Գևորգյանը: Նա իր գոհունակությունը հայտնեց համաժողովի օրակարգում ներառված հարցերի քննարկումներից՝ ասելով, որ դրանք այն հարցերն են, որոնք տարիներ շարունակ հուզում և հետաքրքրում են մեզ: Քննության առնվեցին ոչ միայն ԼՂ-ին վերաբերող մասով, այլև, թե ինչ վիճակ է տիրում միջազգային կազմակերպություններում, ինչպիսի կացություն կա հետխորհրդային տարածքում, և ինչպիսի հնարավոր քայլեր պետք է արվեն, որպեսզի կարողանանք գտնել այն օպտիմալ և ամենապահանջված լուծումները, որոնք թույլ կտան հեշտացնել ապագա սերնդի համար նախատեսվող այդ հնարավորությունները, որոնք մեր ժամանակներում ոչ միայն հրատապ են, այլև անհասկանալի կլինի, եթե մենք այդ ռեսուրսները չարանադրենք մեր երիտասարդ սերնդին:

Նայել տարբեր երկրներում: «Ժամանակները փոխվում են, բայց արժեքները չեն կարող փոխվել»,- եզրահանգեց Ա. Գևորգյանը՝ նշելով, որ այսօր էլ այդ պահանջը կա, այսօր էլ Արցախից և չճանաչված մյուս պետություններից մարդիկ ուզում են լրիվությամբ ներգրավված լինել միջազգային այն կրթական ծրագրերին, որով որևէ մեկին աշխարհում չես գաղտնացնի:

Ամբողջությամբ նկատեց, որ ՀՀ ԿԳՆ-ի կողմից այդ համաժողովին ընդառաջելը նման ներկայացուցչական կազմով՝ նշանակում է, որ շատ կոնկրետ և շատ ճիշտ տեղ է հատկացվում այն բոլոր հարցերին, որ դրվել են որպես խորագիր միջազգային այս համաժողովին: Դա նաև նշանակում է, թե ՀՀ ԿԳՆ-ն, ամենամեծ նախարար Ա. Ազոտյանը ինչ տեղ են հատկացնում Բոլոնիայի շրջանակներում չճանաչված պետություններին հուզող հարցերին:

Համաժողովը բովանդակային առումով բազմաթիվ հարցեր է առաջադրել, դրանց մի մասին տրվել են համապատասխան լուծումների հնարավոր տարբերակներ, բայց ամբողջ քննարկումները ցույց են տվել, որ չճանաչված պետություններում առաջարկված մեծաթիվ աշխատանք է արվել կրթական համակարգում՝ կրթության չափորոշիչները միջազգային չափանիշներին մոտեցնելու ուղղությամբ: Սա իսկապես մեծ ծավալի աշխատանք է, որն ամենօրյա ուշադրություն է պահանջում: Համաժողովի քննարկումները ցույց են տվել, որ դրանով հանդերձ, չի կարելի համարել, որ մեր խնդիրներն ամբողջությամբ լուծված են: Այսօր էլ բազմաթիվ հարցեր են ծագում՝ դարձյալ չճանաչված երկրների մակարդակով և արագ լուծման պահանջ են դնում: Իսկ դա նշանակում է, որ ճանապարհը դեռ չի ավարտվել, առայժմ կան դժվարություններ, որոնք պահանջում են ոչ միայն շարունակել, այլև ճիշտ գաղափարներ ու առաջարկներ ներկայացնել:

Ամփոփելով, Ա. Գևորգյանը՝ որպես հյուրընկալ կառույցի ներկայացուցիչ, շնորհակալություն հայտնեց համաժողովի մասնակիցներին ու նաև պատրաստակամություն՝ բոլոր կարգի հարցերով նպաստել, որ մեր պետականությանը վերաբերող, մեր ժողովրդին հուզող հարցերի շուրջ այդպիսի բարձր մակարդակով քննարկումներ լինեն, որովհետև միայն այդպես, քայլ առ քայլ մոտենում ենք դժվարագույն հարցերի լուծմանը:

Համաժողովի վերջում տեղի ունեցավ հիշարժան արարողություն. ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը և Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության կրթության նախարար Սվետլանա Ֆադեևան ստորագրեցին համագործակցության Համաձայնագիր: Երկուստեք նշվեց, որ համախափ կլինեն հանդիպումները կրթական հիմնախնդիրների շուրջ: Նախարարները համոզված են հայտնեցին, որ իրենց գործընդունումն օրինակ կդառնա չճանաչված մյուս երկրների համար, որ նրանք նույնպես կարող են գնալ այդ ճանապարհով՝ ստեղծելով իրենց միությունը, և նրանց ձայնը, կարծիքը լսելի կլինեն տարբեր մակարդակներում:

«Մեր երկու նախարարությունների միջև ստորագրվեց կարևոր Հռչակագիր: Եվ սա միտված է մեր հետագա աշխատանքային գործունեությանը: Ու կարելի է ասել, որ այսօրվա համաժողովի կարևոր արդյունքներից մեկն այն է, որ մենք սկիզբը դրեցինք այն համագործակցության, որի պահանջներն այսօր քննարկեցինք: Դրանով իսկ կարևոր քայլ կատարեցինք: Թող չճանաչված պետություններն իրար հետ հարցերը լուծեն, մնա միայն մյուս պետությունների հետ»,- ասաց Ս. Ասրյանը: Նա բարձր գնահատեց այդ գործում ՀՀ ԿԳ նախարարության՝ ի դեմս նախարար Ա. Ազոտյանի, դերակատարությունը՝ նշելով, որ կծեռնարկվեն համատեղ քայլեր՝ միասնալու Բոլոնիայի գործընթացին: Ըստ էության, Արցախի իրականացում է այդ գործընթացի հիմնադրությունները՝ անկախ այն բանից՝ մեզ ընդունո՞ւմ են, թե՛ չեն ընդունում: «Թվում է՝ այս ճանապարհով կհասնենք հաջողությունների»,- այսպես եզրակացրեց իր խոսքը ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը:

Միջազգային համաժողովի մասնակիցներին ընդունել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

# ՏԻՊՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԱՍ



Կոմունիստական գաղափարախոսության վրա կառուցված և տնտեսական, սոցիալական, կրթական, գիտական և մյուս համակարգերը նոր իրավիճակում այլևս նպաստավոր չէին կիրառման համար, այդ երկրները հայտնվել էին համակարգային ճգնաժամում, և պահանջվում էր հասարակական հարաբերությունների համակարգային տրանսֆորմացիա: Խնդիրն էլ ավելի էր բարդացնում այն հանգամանքը, որ այլևս պիտանի չէին նախկին համակարգի հիմքում ընկած արժեքները, գիտելիքներն ու փորձը: Քանի որ կոմունիստական գաղափարախոսությունը մերժում էր բազմակարծությունը, հետկոմունիստական հասարակությանը չունեին նաև նոր համակարգերի ձևավորման համար անհրաժեշտ գիտելիքներ ու փորձ և պետք է ձևավորեին իրենց համար՝ միանգամայն մինչ այդ անհայտ համակարգեր: Հետևաբար, հետկոմունիստական տրանսֆորմացիայի հաջող իրականացումը պահանջում էր միաժամանակ երկու գործընթացի արդյունավետ համադրում: Նոր համակարգերի ձևավորում և նոր գիտելիքների յուրացում: Այնուհաստ է, որ նման խիստ բարդ խնդիր լուծման ժամանակ համակարգաստեղծ առաքելություն է ստանում կրթության և գիտության համակարգը: Այս համակարգում տեղի ունեցող բարեփոխումներից է կախված ոչ միայն կրթության և գիտության որակը, այլև մյուս ոլորտներում տեղի ունեցող գործընթացների արդյունավետությունը, քանի որ գիտակրթական ոլորտում են ձևավորվում այն մասնագետները, որոնց գիտելիքների ու հմտությունների հիման վրա են մշակվում և կիրառվում մյուս ոլորտներում իրականացվող բարեփոխումները: Նման բարդ խնդիրների լուծման ժամանակ բացառիկ նշանկություն են ստանում համագործակցությունն ու ինտեգրումը այն հասարակությունների ու կառույցների հետ, որոնք ունեն անհրաժեշտ փորձ և գիտելիքներ: Այդ առումով առանցքային նշանակություն ունի ինտեգրումը բարձրագույն կրթության եվրոպական տարածքին կամ մասնակցությունը Բոլոնիայի գործընթացին:

Թեև Բոլոնիայի գործընթացը հիմնադրվել է իր կենսունակությունն ապացուցած եվրոպական կրթական տարածքի արդյունավետության մեծացման և գլոբալիզացիայի պայմաններում առաջացող մարտահրավերներին դիմակայելու նպատակով, այդ գործընթացը լայն հնարավորություններ է ստեղծում նաև հետկոմունիստական տրանսֆորմացիայի անհրաժեշտության մարտահրավերների առաջ հայտնված պետությունների համար: Պա-

տահական չէ, որ Բոլոնիայի հռչակագիրն ընդունելիս հիմնադիրներն արձանագրում էին, որ կրթության և կրթական համագործակցության կարևորությունը կայուն, խաղաղ և ժողովրդավարական հասարակությունների զարգացման և ամրապնդման համար հանրաճանաչ է և առաջնահերթ, առավել ևս, Հարավարևելյան Եվրոպայի իրավիճակի հետ է կապված: Այդ պետությունների շարքում կա մի խումբ, որտեղ պետականության կայացման արդեն նշված խիստ բարդ գործընթացն ուղեկցվել է հակամարտություններով, հաճախ էլ՝ զինված բախումներով, որոնց պայմաններում կայացման ու զարգացման սուղ հնարավորություններն ավելի են սահմանափակվել միջազգային համագործակցության գրեթե անհատկապես բարդություններով: Մինչդեռ, ըստ 1999թ. ժնևու ընդունված կրթության միջազգային կոնֆերանսի հռչակագրի, կրթության բովանդակությունը պետք է դառնա համերաշխության, քաղաքացիական պատասխանատվության, կոնֆլիկտները ոչ բռնի միջոցներով լուծելու արժեքների ու հմտությունների ձևավորում: Ընդ որում, մեծ ուշադրության պետք է արժանանա ժողովուրդների միջև խաղաղության պահպանումը, տարատեսակ հակամարտությունների կարգավորումը, դրանց պատճառների ու հետևանքների վերացումը: Հետևաբար, հետկոմունիստական տրանսֆորմացիայի արդյունավետությունը հետկոմունիստական պետություններում պայմանավորում է ոչ միայն պետականության կայացում, այլև կարևոր նշանակություն ունի հակամարտությունների լուծման տեսակետից: Այդ առումով այս համաժողովի անցկացումը խիստ արդիական է, և անհրաժեշտ ու ցանկալի է, որ նման միջոցառումներն ունենան պարբերական բնույթ: Խնդրի բարդությունը պահանջում է համագամակից անդրադառնալ դրա մի շարք ասպեկտներին՝ սկսելով հետկոմունիստական տրանսֆորմացիայի առանձնահատուկ խնդիրներից կրթության և գիտության ոլորտում: Այդ երկրներում բարձրագույն կրթության ոլորտում միաժամանակ պետք է իրականացվեն թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ բովանդակային բարեփոխումներ: Ինստիտուցիոնալ բարեփոխիչ համատեքստում պետք է ներդրվեն բարձրագույն կրթության կազմակերպման ու իրականացման արդիական մոտեցումներն ու սկզբունքներ, ինչի իրագործմանն է ուղղված Բոլոնիայի գործընթացը: Բովանդակային բարեփոխումների կարիքը հատկապես անհրաժեշտ է հասարակական գիտությունների ոլորտում: Բովանդակային բարեփոխումների հաջող իրականացման համար պահանջվում են մարդկային, մասնագիտական ու ֆինանսական զգալի ռեսուրսներ, ինչը լուրջ մարտահրավեր է հետկոմունիստական երկրների համար: Այդ առանձնահատուկ ուսումնասիրության բարդ խնդիր, որը, սակայն, անհրաժեշտ մոտեցումների կիրառման դեպքում իր լուծումն ունի, հատուկ ուսումնասիրության առարկա է: Հաշվի առնելով, որ այդ խնդիրը ծառայած է նաև ՄԱԿ-ի անդամ հետկոմունիստական երկրների առաջ և առանձնահատուկ ուսում-

նաիրության առարկա է, մասնավորապես, խնդրի բարդությունների լուծման հնարավորություններին է անդրադարձել նաև Երևանի պետական լեզվաիսասարակագիտական համալսարանի հեռանկարային ուսումնասիրությունների կենտրոնի ջանքերով և ՀՀ ԿԳՆ աջակցությամբ վերջերս լույս տեսած «Հայկական քաղաքագիտական հանդես» այս տարվա առաջին համարը: Միայն ընեն, որ բովանդակային բարեփոխումների հաջողությունը մեծապես կախված է ոչ միայն կրթության և գիտության ոլորտներում իրականացվող քաղաքականության որակից, այլև համալսարանների կոնկրետ ուղղություններում միջազգային չափանիշներին համապատասխան գիտական և կրթական ծրագրերի մշակման ու արդյունավետ համադրման ունակությունից: Այս համաժողովի համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունեն ինստիտուցիոնալ բարեփոխումները, որոնք ընկած են Բոլոնիայի գործընթացի հիմքում: Առաջին հայացքից Բոլոնիայի գործընթացի շրջանակներում այդ բարեփոխումները սոսկ գլոբալիզացիայի արդյունքում առաջացած մարտահրավերներին դիմակայելու փորձ են՝ եվրոպական կրթական համակարգերի համադրելիությունն ու միասնականությունն ապահովելու և բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ձևավորման միջոցով: Առաջարկվող մեխանիզմներն են՝ կրեդիտային համակարգ, աստիճանների համադրելիություն, ուսանողների և դասախոսների շարժունակության ապահովում, որակի ապահովման նպատակով եվրոպական համագործակցություն և այլն: Թվում է, սոսկ տեխնիկական միջոցներ են, սակայն իրականում գործընթացը քաղաքակրթական ծրագիր է: Այն, ինչպես արձանագրված է Հռչակագրում, հիմնված է «արժեքների ընդհանրության գիտակցության և ընդհանուր սոցիալական ու մշակութային տարածքի պատկանելության» վրա: Հատկանշական է, որ բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ձևավորումը պայմանավորում է «լիազատար հարգանք մշակույթների և լեզուների բազմազանության, ազգային կրթական համակարգերի և համալսարանական ինքնավարության նկատմամբ»: Վերոհիշյալ մեխանիզմները կարող են արդյունավետ լինել նախանշված նպատակներին հասնելու համար, թեև կիրառվում են այնպիսի միջավայրում, որտեղ գերակայում են եվրոպական արժեքները: Դա են հաստատում Բոլոնիայի գործընթացի անդամակցության պայմանները, որոնք սահմանվել են 2007թ., Լոնդոնի նախարարների համաժողովում: Դրանցից մեկը եվրոպական մշակութային հռչակագրին միացած լինելն է, մյուսը՝ Բոլոնիայի գործընթացի հռչակած սկզբունքներին, արժեքներին ու նպատակներին հավատարիմ լինելը: Առաջին պայմանը ենթադրում է, որ անդամությունը հնարավոր է միայն Եվրոպայի խորհրդի անդամ երկրների համար: Դրանք սոսկ տեխնիկական պահանջներ չեն: Այդ պահանջներից ուղղակիորեն կան անուղղակիորեն բխում է երեք հանգամանք, որոնք պետք է հաշվի առնեն գործընթացին մասնակցելու ցանկու-

թյուն հայտնած կողմերը, տվյալ դեպքում՝ հետկոմունիստային պետությունները:

Նախ՝ Եվրոպայի խորհուրդը հստակ սահմանված արժեքների՝ ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության վրա հիմնված եվրոպական կառույց է, և Բոլոնիայի գործընթացին մասնակցությունը կլինի այնքան արդյունավետ, որքան մասնակիցները հավատարիմ են այդ արժեքներին: Երկրորդ, գործընթացը ոչ թե ապահովում է արդյունքներ, այլ ստեղծում է նաև հնարավորություններ՝ դրանց արդյունավետ օգտագործման դեպքում լավ արդյունքներ ունենալու համար: Հետևաբար, արդյունքներն ամենից առաջ կախված են համալսարանների գործադրած ջանքերից, ինչպես նաև իրականացվող կրթական քաղաքականությունից: Երրորդ հանգամանքը, որը բխում է անդամակցության առաջին պահանջից, կարևոր է հատկապես հետխորհրդային կոնֆլիկտային պետությունների համար: Այն է, որ Բոլոնիայի գործընթացին փաստորեն կարող են մասնակցել միայն ՄԱԿ-ի անդամ երկրները: Կարող է թվալ, թե հետխորհրդային կոնֆլիկտային պետությունների համար անհնար է դառնում Բոլոնիայի գործընթացի հնարավորությունների օգտագործումը: Նախ՝ ԼՂ-ն, Կոսովոն, Մերձդնեստրը, Աբխազիան և Հարավային Օսիան թեպետ ճանաչված պետություններ չեն, սակայն աշխարհագրորեն և միջազգային չափանիշներով բարձրագույն կրթության եվրոպական տարածքի մաս են կազմում: Այդ տարածքում չպետք է լինեն սպիտակ կետեր կամ մարդիկ, որոնց նկատմամբ խտրականություն է դրսևորվում: Կրթության իրավունքը մարդու անձնահիմնարար իրավունքներից է: Դա միջազգային իրավունքի այն նորմերից է, որը որևէ վերապահման ենթակա չէ:

Կրթության իրավունք յուրաքանչյուրի և բոլորի համար է՝ առանց որևէ խտրականության: Այնուհաստ է, որ վերապահումներ չեն կարող լինել նաև ՄԱԿ-ին չանդամակցած պետությունների քաղաքացիների նկատմամբ: Այս նորմը ՄԱԿ-ի անդամ երկրներից յուրաքանչյուրի, այդ թվում և Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների պարտականությունն է: Հետևաբար, Բոլոնիայի գործընթացից դուրս չպետք է մնան հետխորհրդային կոնֆլիկտային պետությունների կրթական հաստատությունները: Այդ իրավունքների իրացման հետ կապված՝ անհրաժեշտ է ակտիվ հետևողական և համախմբված աշխատանք մի շարք եվրոպական կառույցների հետ, որոնց գործունեության ոլորտը կրթությունն է:

Բոլոնիայի գործընթացի մյուս առանձնահատկությունը ճկունությունն է՝ անդամակցության հետ կապված: Մերժելով Կոսովոյի հայտը անդամակցության վերաբերյալ, Բոլոնիայի քարտուղարությունը դեռևս 2007թ. նշել է, որ կարելի է դիտարկել ասոցիացված հարաբերություններ ձևավորելու հնարավորությունը հյուրի կամ հատուկ դիտորդի կարգավիճակով: Իհարկե, չպետք է մոռանալ, որ Բոլոնիայի քարտուղարությունը առանց մնա-

առաջարկի մերժել է Հյուսիսային Կիպրոսի հայտը, և որ քաղաքական հարցերի քննարկման ժամանակ Եվրամիությունը Կոսովոն համարել է հատուկ դեպք: Բայց կա երկու հանգամանք, որոնք հնարավորություն են թողնում, որ եվրոպական մշակութային կոնվենցիայի մաս չկազմող, սակայն եվրոպական կրթական տարածքում գտնվող հետկոմունիստային երկրներին Բոլոնիայի գործընթացում հատուկ կարգավիճակ է տրվում: Դրանցից առաջինն այն է, որ Հյուսիսային Կիպրոսի անջատումը տեղի է ունեցել ոչ ժողովրդավարական ճանապարհով, ոչ խաղաղ միջոցներով, ռազմական ուժի կիրառմամբ, իսկ ԼՂ-ն և վերոհիշյալ մյուս պետություններն անցել են բոլորովին այլ ճանապարհ, մասնավորապես քաղաքական շահարկումներից զերծ մասնագիտական շրջանակներում ԼՂ հակամարտությունը դիտարկվում է որպես ինքնորոշման հակամարտություն՝ ի տարբերություն Հյուսիսային Կիպրոսի:

Մյուս կողմից, Բոլոնիայի քարտուղարությունը չի կարող քաղաքական կազմակերպությունների մասն քաղաքականացված դիրքորոշում դրսևորել մարդու իրավունքների և մասնավորապես, կրթության իրավունքի խնդիրների հարցում: Հարկ է ավելացնել, սակայն, որ մինչ Բոլոնիայի գործընթացում հատուկ կարգավիճակ հայցելը վերոհիշյալ պետությունները պետք է լուրջ ջանքեր գործադրեն, որոնք կվկայեն իրենց հավատարմությունը գործընթացի սկզբունքներին, արժեքներին ու նպատակներին: Այդ առումով Կոսովոյի դեպքը կարող է լավ օրինակ լինել: Դեռևս 1999 թվականից ակտիվ միջամալսարանական համագործակցություն էր ծավալվել Կոսովոյի և բրիտանական համալսարանների, մասնավորապես Շևֆիլդի համալսարանի միջև: Ընդ որում, հատկանշական է, որ դա սկսվել է քաղաքագիտության ոլորտից: Երկրորդ հանգամանքը, որը նույնպես վկայում է Կոսովոյի ակտիվության մասին, մի քանի համալսարանների ներգրավվածությունն է Տեմպլսի ծրագրերում: Թեթե մնան քայլերը համադրվեն համալսարաններում, Բոլոնիայի գործընթացում սահմանված սկզբունքների մեխանիզմների չափանիշների կիրառման հետ, ապա հետկոմունիստային երկրներն էական հաջողություններ կարող են արձանագրել բարձրագույն կրթության եվրոպական տարածքին ինտեգրվելու առումով, ինչը լուրջ ազդակ կլինի հատուկ կարգավիճակ ակնկալելու համար, իսկ հետագայում՝ անդամակցելու Բոլոնիայի գործընթացին: Այսպիսով, չնայած հետկոմունիստային պետություններում կան էական առանձնահատկություններ ու դժվարություններ Բոլոնիայի գործընթացին լիարժեքորեն ընդգրկվելու առումով, սակայն առկա են նաև լուրջ հնարավորություններ բարձրագույն կրթության եվրոպական տարածքին ինտեգրվելու, դրա արդյունքները պետականության կայացմանը և հակամարտությունների լիարժեք լուծմանը ի նպաստ օգտագործելու համար:



ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՍԼԱԿԱ ԱՄՐՅԱՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ



20-րդ դարի վերջը և 21-րդ դարի սկիզբը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում նշանավորվեցին տարբեր բնագավառներում իրականացված մի շարք բարեփոխումներով: Անմասն չմնաց նաև բարձրագույն կրթության համակարգը, որի կառուցվածքային բարեփոխումները, սկիզբ առնելով 1990-ական թվականներին, լայն թափ ստացան 2005 թվականից հետո, երբ ընդունվեց «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ԼՂՀ օրենքը», իսկ Հայաստանի Հանրապետությունը, որի հետ Արցախը գտնվում է կրթական նույն տարածքում, պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին: Արդյունքում Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունների համագործակցության ծրագրին համապատասխան՝ ԼՂՀ բուհերում և ներմուծվեցին Բոլոնիայի հիմնարար սկզբունքների, հատկապես բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի, բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումների, կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի, հետազոտողի կրթական ծրագրի՝ Բոլոնիայի երրորդ աստիճանի պահանջները: Բարեփոխումների հետագա ընթացքն ուղղորդվեց այնպիսի փաստաթղթերով, ինչպիսիք են «Բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի մերթմամբ մասին», «Կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին», «Կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին», «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու մասին», «Ասպիրանտուրայի ընդունելության կարգը հաստատելու մասին», «Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու մասին», «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին», «Ասպիրանտուրայի ընդունելության քննությունների անցումային շեմերը հաստատելու մասին» և կառավարության այլ որոշումներն ու գերատեսչական ակտերը, ինչպես նաև բուհերի կողմից ընդունված տարբեր կարգեր ու կանոնակարգեր, որոնք օրենսդրական բարենպաստ հիմքեր ստեղծեցին բարձրագույն և հետբուհական կրթական համակարգի ընդհանուր, ինչպես նաև Բոլոնիայի սկզբունքներով ուղղորդվող կառուցվածքային բարեփոխումների համար: Դրանք ընդունումից հետո ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը իր աշխատանքները նպատակաուղղեց միջին, բարձրագույն

և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում բազմակողմանի բարեփոխումների իրականացմանը, որոնք ներառում են կրթության կառուցվածքը, բովանդակությունը ու կառավարումը՝ նպատակ ունենալով ապահովել հանրապետության մասնագիտական կրթության համակարգի առավել ինտեգրումը եվրոպական բարձրագույն կրթական տարածքին:

Նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական քաղաքականության հիմքում կրթությունը դիտարկվեց որպես գերակա ուղղություն, և կարճ ժամկետում վերակառուցվեց կրթական ողջ համակարգը՝ նախադրոշմային կրթական աստիճանից մինչև հետբուհական մասնագիտական կրթություն, որն իր զարգացումն ունեցավ հետագա տարիներին, և ներկայումս գործում է բարձրագույն մասնագիտական կրթական կայուն համակարգ: 2006-2007 ուսումնական տարվանից անցում կատարվեց նաև 12-ամյա հանրակրթական համակարգին:

2014թ. մայիսի 1-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում են բարձրագույն ուսումնական հինգ հաստատություններ, որոնցից Արցախի պետական համալսարանը և «Հայաստանի ազգային ազարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղը՝ պետական, իսկ «Մետրոպ Մաշտոց», «Գրիգոր Նարեկացի» համալսարաններն ու «Գյուլբյան» կիրառական արվեստի ինստիտուտը՝ ոչ պետական հավատարմագրված բուհեր են: Ուսանողների ընդհանուր թիվը 6519 է, դասախոսների՝ 652: 35 դասախոս իրավիճակում են Հայաստանի Հանրապետությունից և այլ երկրներից: Բուհերում գործում է 16 ֆակուլտետ և 44 ամբիոն, որտեղ իրականացվում են բակալավրական՝ 64, մագիստրոսական՝ 46, ասպիրանտական՝ 25 կրթական ծրագրեր:

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ընկերակցության կողմից մշակված եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակի ապահովման չափորոշիչներն ու ուղեկցիչները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցը հիմք ընդունելով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհերում ներկայումս ընթանում է որակի գործընթացների կառավարման մեխանիզմների ու գործիքների մշակման գործընթացը: Կատարվել են ներքին մոնիտորինգային հետազոտություններ ուսանողների, դասախոսների և գործատուների շրջանում, որոնք թույլ են տվել հստակեցնել ուսումնական գործընթացում առկա բացողումներն ու թերությունները: Չնայած բուհերը դեռևս չունեն որակի ապահովման քաղաքականությունը նկարագրող առանձին փաստաթուղթ, բայց այն արտացոլված է այլ փաստաթղթերում: Մասնավորապես բարձրագույն ուսումնական բոլոր հաստատությունները մշակել և իրենց խորհուրդներում հաստատել են զարգացման ռազմավարական ծրագրեր և հայեցակարգեր:

Որակի ներքին ապահովման համակարգի գործադրման և կա-

յացման գործում հատկապես բարձր է վարչական, դասախոսական և ուսումնասովորական անձնակազմի մասնակցության մակարդակը: Վերջին տարիներին իրականացվել են մի շարք կարևոր քայլեր ուսանողների ներգրավվածության և դերի բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքով սահմանվել են ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, ըստ որի՝ ուսանողն իրավունք ունի ընտրել տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար պարտադիր և ոչ պարտադիր դասընթացներ, մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը, բուհի գործունեությանն առնչվող բոլոր խնդիրների քննարկմանը, համապատասխան կառավարման և ընտրովի մարմինների աշխատանքներին: Ըստ այդմ՝ ներկայումս բուհերի կառավարման մարմիններում անդամների առնվազն 25 տոկոսն ուսանողներ են, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացվում է համապատասխան մակարդակի ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմինը: Բոլոր բուհերում ստեղծված են ուսանողական վարչություններ և խորհուրդներ, որոշներում՝ նաև ուսանողական գիտական ընկերություններ, որոնք ունեն ակտիվ գործունեություն հատկապես կանոնավոր կերպով անցկացվող հարցումների, կառավարման ու խորհրդակցական մարմիններում ընդգրկվածության, արտատու մասնական միջոցառումների կազմակերպման գործընթացներում:

Քայլեր են արվում ազգային մակարդակում ուսանողների աջակցող և խթանող կառույցների ստեղծման ուղղությամբ, որոնք պետք է իրականացնեն բազմաբնույթ ծրագրեր՝ ուղղված ուսանողների և երիտասարդության խնդիրների լուծմանը, ուսանողական ակտիվության և նախաձեռնողականության խթանմանը:

Որակի ներքին ապահովման համակարգի կարևորագույն տարրերից է ուսանողների գնահատումը, որի համար ԼՂՀ բոլոր բուհերում գործում են հստակ ձևակերպված ու իրապարկված չափանիշներ, կանոնակարգված գնահատման մեթոդներ, ինչպես նաև արդյունքների բողոքարկման մեխանիզմներ, որոնց մասին ուսանողները հիմնականում տեղեկացվում են դրանք արտացոլող ուղեցույցների, համապատասխան կայքէջերի, դեմոնստրացիաների և դասախոսների միջոցով: Աշխատանքներ են տարվում ուսանողների գնահատումը դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարակի վրա կատարելու ուղղությամբ:

Որակի ներքին ապահովման համակարգի եվրոպական չափանիշներով և ուղեկցիչներով առաջարկվում է, որ բուհերում դասախոսական կազմի ներգրավման և մասնագիտական զարգացման համակարգերն առաջնորդվեն ուսումնասիրության համար անհրաժեշտ կոմպետենցիաների առկայության պահանջով, որի կատարման նպատակով իրականացվում են ուսանողական հարցումներ, դասախոսներին աշխատանքի ընդունելի առաջնահերթությունը տրվում է գիտական աստիճան և դասավանդման հմտություն ունեցողներին, համապատասխան կանոնակարգերով սահ-

մանվում են պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման սկզբունքները: Բացի դրանից, Արցախի պետական համալսարանում 2012 թվականից գործում է համապատասխան կանոնակարգով հաստատված պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը, որի նպատակն է համալրել ու բարելավել պրոֆեսորադասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափորոշիչներին համապատասխան, ապահովել դասախոսների ընդհանուր և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումը:

Որոշակի առաջընթաց կա որակի ներքին ապահովման մյուս ուղղություններում: Բոլոր բուհերն ունեն ուսումնաստիճանի կազմի միջոցներ, գրադարանային և տեղեկատվական այլ ռեսուրսներ, համակարգչային կաբինետներ, ինտերնետային կայքէջեր, որոշները՝ նաև լաբորատորիաներ: Միջոցներ են ձեռնարկվում բուհերի գործունեության արդյունավետ կառավարման համար օգտագործվող տեղեկատվական համակարգերի ընդլայնման և բուհերի գործունեության բոլոր բնագավառներն ընդգրկող կենտրոնացված տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ՝ ներառելով շրջանավարտների զբաղվածության և նրանցից գործատուների բավարարվածության մասին վիճակագրական տվյալները, որոնց նախկինում ուշադրություն չի դարձվել: ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը համակարգված և հետևողականորեն ամբողջական տեղեկատվություն է տրամադրում հասարակության շահագրգիռ կողմերին Եվրոպական կրթական բարձրագույն տարածքին ինտեգրվելու ուղղությամբ կատարվող աշխատանքների վերաբերյալ: Միաժամանակ պետք է նշել, որ դեռևս բավարար չէ բուհերի կողմից ներկայացվող հանրային տեղեկատվությունը հաստատությունների, առաջարկվող կրթական ծրագրերի որակի, կրթական վերջնարդյունքների, դասավանդման, ուսումնասիրության, գնահատման մեթոդների և այլ ուղղություններով:

Ուսանողների շարժունության և կրթական վերջնարդյունքների ճանաչման տեսանկյունից մեծ կարևորություն ունի Բոլոնիայի գործընթացի շրջանակներում ձևավորված կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը, որը մեծապես նպաստում է նաև կրթական ծրագրերի մշակման, նկարագրման, իրականացման ու բարձրագույն կրթական որակավորումների շնորհման գործընթացներին: 2008թ. մայիսի 6-ին ԼՂՀ կառավարությունն ընդունեց որոշում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին», որից հետո համապատասխան քայլեր ձեռնարկվեցին բարձրագույն կրթության՝ կրեդիտային համակարգով կազմակերպման ուղղությամբ: Գործընթացին աջակցելու նպատակով նախարարության կողմից մշակվել է բարձրագույն ուսումնական հաստատություններին են տրամադրվել «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգը», կրեդիտային համակարգի ներդրման մեթոդական ուղեցույցը,

գործող մասնագիտությունների առարկայական ծրագրերը և ուսումնական պլանները վերակազմվել են մոդուլային սկզբունքով ու կրեդիտային հենքով:

2008-2009 ուսումնական տարվանից հանրապետության բուհերն աստիճանաբար անցան նոր համակարգի գործադրմանը՝ սկզբում բակալավրիատի, այնուհետև՝ մագիստրատուրայի մակարդակներում: Արդյունքում յուրաքանչյուր բուհ մշակել և հաստատել է «Ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» կարգը՝ հրատարակելով նաև դրա նախադրման մեջ դնելով նաև դասախոսների ու ուսանողների համար նախատեսված համապատասխան ուղեցույցը, որն ընդգրկում է կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը, հիմնական գործառնությունները, դասընթացներն ու կրթական մոդուլները, կրեդիտի հատկացումը, կրթական ծրագիրը և ավարտական պահանջները, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական տեղեկագիրը, դասընթացի վերահսկման և կրկնումը, ծրագրի եզրափակիչ ատեստավորումը, կրեդիտների փոխանցումը, ուսանողի իրավունքներն ու պարտականություններն արտացոլող և այլ դրույթներ: Համակարգի լուսաբանման նպատակով դասախոսների և ուսանողների համար կազմակերպվել են քննարկումներ, որոշ վարչական աշխատողների և դասախոսների համար Հայաստանի Հանրապետության պետական բուհերում իրականացվել վերապատրաստումներ:

Բոլոր բուհերի ուսումնական ծրագրերում կրեդիտներ են հատկացված դասընթացներին ու մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային, ավարտական աշխատանքներին ու մագիստրոսական թեզերին, ամփոփիչ ատեստավորման քննություններին, ընդ որում, դասընթացներին և մոդուլներին հատկացված կրեդիտները, բացի լսարանային աշխատանքային, ներառում են նաև ուսանողի ինքնուրույն աշխատանքները:

Բակալավրի աստիճանի բոլոր մասնագիտությունների ուսումնական ծրագրերը ներառում են ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կրթամասեր, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ, իսկ մագիստրոսի աստիճանի ուսումնական ծրագրերն՝ ընդհանուր և մասնագիտական, տիտղոսային ծրագրի պարտադիր ու կամ ընտրական դասընթացներ, հետազոտական հատված և եզրափակիչ ատեստավորում:

Արցախի պետական համալսարանը, բացի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերից, իրականացնում է նաև հետբուհական կրթական ծրագիր, որտեղ կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգի դրույթները ներդրվել են 2012-2013 ուսումնական տարում: Հետագոտողի գիտակրթական ծրագիրը ներառում է ուսումնական և հետազոտական կառուցմանսեր, որոնցից առաջինն ընդգրկում է ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության կրթամասերը, պրակտիկաներն ու ատեստավորումը, իսկ հետազոտական կառուցմանսեր՝ գիտական սեմինարներին և աշխատաժողովներին մասնակցությունը,

ՀԱՍՏՈՐՈՎ

ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքը և թեկնածուական ատենախոսության պատրաստումը:

ԼՂՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվող բոլոր գործընթացները գտնվում են կրթության և գիտության նախարարության մշտական վերահսկողության և ուշադրության տակ: Պարբերաբար կազմակերպվում են ստուգայցեր, խորհրդակցություններ և հանդիպումներ, բարձրագույն կրթական համակարգին վերաբերող փաստաթղթերի մշակման մեջ փորձ է արվում հնարավորինս ընդգրկել բուհերի ներկայացուցիչներին: Մասնավորապես 2012-2013 ուստարում նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժնի աշխատողների կողմից հաստատություններում անց են կացվել լայնածավալ ստուգումներ, որի արդյունքում բացահայտված թերությունների և խախտումների վերացման նպատակով տեղի են ունեցել քննարկումներ բոլոր բուհերի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմերի, ինչպես նաև ուսանողական վարչությունների անդամների հետ, հաստատվել է ժամանակացույց դրանց վերացման համար:

Սակայն, չնայած իրականացված մեծածավալ աշխատանքներին, դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ՝ հատկապես Բոլոնիայի հիմնարար սկզբունքների իրականացման ուղղությամբ: Իրականացված փոփոխություններն ունեն հետագա զարգացման ու կատարելագործման անհրաժեշտություն և իրենց հիմնական շահառուներին՝ ուսանողներին, դասախոսներին, գործատուներին ուղղակիորեն հասնելու անհրաժեշտություն: Խիստ կարևոր է շահառուների առավելագույն ներգրավումը գործընթացի հետագա զարգացման ներքին, նորաստեղծ կառույցների, գործընթացների ու ընթացակարգերի ամբողջական ընկալումը և ընդունումը ինչպես բուհական հանրության, այնպես էլ հասարակության լայն խավերի կողմից: Ներկա փուլի հիմնախնդիրների և մարտահրավերների շարքում կարևոր է առանձնացնել հետևյալը.

- որակի ներքին ապահովման համակարգերը դեռևս ձևավորման փուլում են, չկան համապատասխան հայեցակարգեր, փորձագիտական կարողություններ, անբավարար է ուսանողների, շրջանավարտների, գործատուների ընդգրկվածությունը որակի ապահովման գործընթացներում, հստակ չեն ծրագրերի կրթական վերջնարդյունքները,
- ուսանողների գնահատումը հիմնականում կատարվում է՝ ելնելով նրանց ճիշտ պատասխանած հարցերի քանակից և հիմնված չէ դասընթացի կամ մոդուլի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի վրա,
- բացակայում է դասախոսների մասնագիտական կարողությունների համապարփակ համակարգը, ուսանողների հարցումների արդյունքները լիարժեքորեն չեն կիրառվում ուսումնառության և որակի շարունակական բարելավման նպատակով,
- թույլ է կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի մասին դասախոսների և ուսանողների տեղեկացվածությունը, համակարգի նշանակության, հիմնական սկզբունքների ու գործառնությունների վերաբերյալ իրազեկումը շարունակում է կատարվել չհամակարգված ձևով,
- դեռևս ձևավորման շրջանում է եվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածի տրամադրումը շրջանավարտներին,
- խիստ սահմանափակ է ուսանողների, դասախոսների և գիտական աշխատողների արտաքին շարժունությունը, համապատասխան քաղաքական և սովորող օտարերկրյա ուսանողների թիվը հիմնականում սահմանափակվում է Ռուսաստանի Դաշնությունից, միջինասիական հանրապետություններից, Վրաստանի Հանրապետությունից և Սիրիայից ընդգրկված հալածի քաղաքացիներով,
- ցածր է մասնագիտական կրթության կազմակերպման գործընթացում գործատուների մասնակցությունը, թույլ են նրանց և բուհերի միջև գործնական կապերը,
- եսկան հիմնախնդիր է բուհերի ներքին արդյունավետությունը: Լեռնային Ղարաբաղում ուսանող-դասախոս հարաբերության միջին ցուցանիշը կազմում է 9,9,
- դեռևս չեն գործում Բոլոնիայի գործընթացում ընդգրկված երկրներում լայնորեն կիրառվող ուսանողական վարկերի, դրամաշնորհների և այլ մեխանիզմներ,
- առաջնահերթ խնդիր է կրթության որակավորումների ազգային շրջանակից բխող գործողությունների իրականացումը և վերջինիս ինքնահավաստագրման գործընթացի իրականացումը, բոլոր մասնագիտությունների բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերի բովանդակության համադրման և ներդաշնակեցման անհրաժեշտությունը,
- առաջնային են շարունակական կրթության խնդիրները,
- լիովին ինտեգրված չեն բարձրագույն ուսումնական և գիտահետազոտական աշխատանքները, ինչը նվազեցնում է ուսումնական գործընթացի և գիտահե-

տազոտական աշխատանքերի որակը բուհերում, - հեռանկարային խնդիր է նաև կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդրումը միջին մասնագիտական կրթական համակարգում:

Նշված հիմնահարցերի լուծման խոչընդոտները պայմանավորված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, որոնցից են.

- բուհերի դեռևս ոչ լիարժեք հետևողականությունը,
- ուսանողների և դասախոսների լեզվական սահմանափակ կարողությունները,
- ուսումնական ծրագրերի և գործընթացի կազմակերպման ժամանակացույցերի անհամադրելիությունը,
- կրեդիտների ճանաչման հստակ մեխանիզմների և չափանիշների անկատարությունը,
- Բոլոնիայի գործընթացի սկզբունքների համեմատաբար ուշ ներդրումը ԼՂՀ բարձրագույն կրթության համակարգում,
- պետական ֆինանսավորման սղությունը և միջազգային ծրագրերով իրականացվող դրամաշնորհների ֆինանսավորման բացակայությունը:

Այսօր ԼՂՀ բուհերում շարունակվում են լայնածավալ բարեփոխումները, աստիճանաբար հստակեցվում է օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտը, ընդունվել է կառավարության որոշումը «ԼՂՀ կրթության որակավորումների տեսքով» շրջանակը հաստատելու մասին», որը կրթության ութ մակարդակներում, որոնցից երեքը վերաբերում են բարձրագույն կրթությանը, ներկայացնում է համապատասխան որակավորումը կողմից պահանջվող կրթական վերջնարդյունքների ցանկը՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների տեսքով: Տարեցտարի ավելանում են նաև բարձրագույն կրթության՝ պետական բյուջեից հատկացվող միջոցները՝ առանձին տեղ հատկացվելով Հայաստանի Հանրապետության և արտերկրի բուհերում սովորող ուսանողներին, հստակեցվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների կապերը հասարակության և աշխատաշուկայի հետ: Մյուս կողմից, աստիճանաբար ավելի սերտ են դառնում կապերը ՀՀ բուհերի հետ, մեծ աշխատանքներ են տարվում արտասահմանյան բուհերի հետ համագործակցության ուղղությամբ, 2007թ. Արցախի պետական համալսարանը Մերձդնեստրի, Հարավային Օսիայի և Աբխազիայի պետական համալսարանների հետ հիմնադրել է «Ինքնորոշված պետությունների համալսարանների ասոցիացիա», 2011թ. ԱրՊՀ-ում բացվել է նշված բուհերի համագործակցության կենտրոն: Հանրապետության բուհերը ձգտում են հնարավորինս առաջնորդվել Լիսաբոնյան կոնվենցիայի, Սորբոնյան և Բոլոնյան հռչակագրերի, Պրահայի, Բեռլինի, Բեռլինի, Լոնդոնի, Վիեննայի և Եվրոպական այլ քաղաքներում կազմակերպված կոնյունկենցիների ու համաժողովների սահմանած սկզբունքներով և դրույթներով, սակայն հիմնախնդիրները շարունակում են մնալ օրախնդիր՝ ամենից առաջ կապվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչված չլինելու հանգամանքի հետ, ինչը խիստ բացասաբար է անդրադառնում բարձրագույն ուսումնական համակարգի զարգացմանը՝ անհնարին դարձնելով ինտեգրումը արտասահմանյան և հատկապես Բոլոնիայի գործընթացում ընդգրկված եվրոպական բուհերին: Մինչդեռ առանց լիարժեք ինտեգրման հնարավոր չէ հասնել լուրջ արդյունքների այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արտասահմանյան բուհերի հետ համատեղ իրականացվող կրթական ծրագրերը, համատեղ շնորհվող որակավորումները, դասախոսների և ուսանողների միջազգային շարժունությունը, որոնք եսկան կարևորություն ունեն համակարգի կատարելագործման համար: Հարկ է նշել նաև, որ աշխարհի տարբեր համալսարաններում ուսանում են ԼՂՀ դպրոցների տասնյակ շրջանավարտներ, սակայն մյուս կողմից մեր բուհերի բակալավրի աստիճանի շրջանավարտներն օտարերկրյա բուհերի հաջորդ կրթական մակարդակում ուսումը շարունակելու, ինչպես նաև աշխատանքի տեղավորվելու համար հաճախ են հանդիպում խոչընդոտների՝ ստացած կրեդիտների և դիպլոմների չճանաչման պատճառով:

Թերևս նաև այս տեսանկյունից խիստ կարևորվել միջազգային ներկա կոնֆերանսի նշանակությունը և նրա կրթությունն առանց խտրականության և որպես մարդու հիմնարար իրավունքների ու ժողովրդավարական արժեքների մաս բնորոշող նշանաբանը՝ հուսով եմ, որ այն կնպաստի բարձրագույն կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարին, ինքնորոշված պետությունների բուհերի՝ Բոլոնյան գործընթացին ինտեգրման ու զարգացմանը: Հավաստիացնում են, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերը պատրաստակամ են հետևողականորեն իրականացնելու այդ ուղղությամբ ստանձնած յուրաքանչյուր պարտավորություն:

ՍԿԵՏԱՆԱ ՖԱԴԵԿԱ. ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԸ ՄԵՐՁԴՆԵՍՏՐՈՍ



Շնորհակալություն այսպիսի կառուցողական քննարկումներին այն հիմնախնդիրների շուրջ, որոնք այսօր կան չճանաչված պետություններում, մասնավորապես, կրթական համակարգի կառուցման գործում, ինձ հրավիրելու համար: Համաժողովի թեմայի հրատապությունը լրացուցիչ փաստարկներ չի պահանջում, քանի որ կրթությունը երկրի մարդկային կապիտալը ձևավորող հիմնական ռեսուրսն է, որը կանխորոշում է այդ երկրի և սոցիալական զարգացման հեռանկարները, և՛ տեղի ու դերը միջազգային ասպարեզում: Կրթության իրավունքը չպետք է կախված լինի այն բանից, թե ինչ քաղաքականություն է իրավական կարգավիճակ ունի այն երկիրը, որում ապրում են նրա քաղաքացիները: Բայց այնուամենայնիվ, չճանաչված երկրներում ապրող քաղաքացիները բախվում են կրթության իրենց իրավունքների ուսուցանմանը: Անդրադառնալով Մերձդնեստրի կրթության հիմնախնդիրներին, անհրաժեշտ է նշել, որ մեր կրթական համակարգի ձևավորումը կատարվել է պատմական և քաղաքական բարդ գործընթացների համապատասխան: Խորհրդային պետության փլուզումից հետո նախկին Մոլդովական Հանրապետության տարածքում սկսվեց մարտնչող նացիոնալիզմի ազդեցիվ գաղափարախոսության հաղթարշավը, որն սկսեց աստիճանաբար դուրս մղել ոչ միայն ռուսաց լեզուն, որն ազգամիջյան հաղորդակցման լեզու է, այլև մոլդովական լեզուն՝ այն փոխարինելով ռուսիներենով, որը դժվար կացության մեջ է դրել այդտեղ ապրող մոլդովացիներին և հարուցել նրանց արդար բողոքը: Նման քաղաքականության գլխավոր նպատակը հասարակության բաժանումն էր եթնիկական սկզբունքներով և հետագա ինտեգրումը Ռումինիային: Արդյունքում չի անցել և քառորդ դար, երբ Մոլդովայի Հանրապետությունում պետական լեզուն հայտարարվեց ռումիներենը և ոչ թե մոլդովերենը: 1990թ. սեպտեմբերին Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության հռչակումն այլ քաղաքական նպատակներ դրեց. ազգամիջյան խաղաղություն, եթնիկական ազատություն, կրթական համակարգի պատմական հերթագայություն, ՌԴ-ի հետ միասնական կրթական դաշտի ստեղծում: Մոլդովական Հանրապետության ռազմական ազդեցիվ Մերձդնեստրի դեմ 1992թ. մեր երկու պետությունները վերջնականապես բաժանեց տարբեր ուղղությունների: Ժամանակը հաստատեց մեր ընտրած ճանապարհի ճշմարտացիությունը դեպի ՌԴ կրթական համակարգի տարածք: Մերձդնեստրի կրթական համակարգն այսօր լրիվությամբ ինտեգրված է ՌԴ կրթական համակարգին: Մենք ունենք միասնական կառուցվածք, կրթության միանման մակարդակ, աշխա-

տում ենք ռուսական կրթական ուսումնական պլաններով ու դասագրքերով՝ լրացնելով դրանց բովանդակությունը Մերձդնեստրյան տարածաշրջանային բաղադրատարրերով, ինչպես օրինակ, Մերձդնեստրի պատմությունը, գրականությունը, հայրենի բնությունը:

Այստեղ ելույթ ունեցողները բարձրացրին ազգային փոքրամասնությունների խնդիրները: Մերձդնեստրում բացակայում է և ինքը՝ «փոքրամասնություն» հասկացությունը: Մերձդնեստրը միակ հետխորհրդային երկիրն է, որտեղ հավասար կարգավիճակ ունեն երեք՝ հիմնական եթնիկների լեզուները՝ ռուսաց, ուկրաիներեն ու մոլդովերեն: Մերձդնեստրի յուրաքանչյուր քաղաքացի ունի և ամբողջովին իրականացնում է ռուսացման լեզուն ընտրելու իրավունք: Մեր կրթական համակարգի առանձնահատկությունը կայանում է ոչ միայն լեզվական մշակույթում, այլև Մերձդնեստրի տարածքում հավասարապես իրագործվում է կրթական գործընթացն այս երեք լեզուներով՝ ռուսերեն, մոլդովերեն կամ ուկրաիներեն՝ սկսած նախադրոցականից մինչև բարձրագույն կրթություն: Մերձդնեստրի տարածքում գործում են 35 մասնագիտական կրթական հաստատություններ, որից 10-ը՝ բարձրագույն, 4 պետական, որից ամենամեծը Մերձդնեստրի պետական համալսարանն է, 1 ոչ պետական, 4 մասնաճյուղով՝ ՌԴ-ի և Ուկրաինայի բուհերի: Սովորում է 27000 ուսանող: 2003թ. սեպտեմբերին ՌԴ-ն Բոլոնիայի հռչակագրին՝ միասնական եվրոպական կրթատարածքին միանալուց հետո, բնական է, որ Մերձդնեստրն էլ սկսեց արդիականացնել ազգային կրթության արդիականացմանը Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համապատասխանեցման նպատակադրությամբ: Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության օրենքով սահմանվել է բարձրագույն կրթության երկաստիճան մակարդակ: Առաջին մակարդակը բակալավրիատն է, որը բակալավրեր է պատրաստում չորս տարում, երկրորդ մակարդակը մասնագիտացումն է, պատրաստման ժամկետը 5 տարի՝ բակալավրիատի հաշվառումով և մագիստրատուրա՝ 6 տարի, դարձյալ բակալավրիատի հաշվառումով: Նույն ձևով էլ սահմանված են հետբուհական մասնագիտական մակարդակները: Առաջին մակարդակը թեկնածուների պատրաստումն է՝ 3-4 տարի, երկրորդ՝ գիտությունների դոկտորների պատրաստում՝ մինչև 3 տարի:

2009-ից ներդրվել է միասնական քննությունների համակարգը: 2011թ. Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետության կրթության մասին օրենքը սահմանեց նորը, որը որոշում է ազգային կրթության ընդունելությունը միասնական քննությունների հիման վրա: Նաև շարունակվում է կրթության որակի գնահատման անկախ համակարգի ձևավորումը, ընդունվում է կրթության որակի գնահատման Մերձդնեստրյան համակարգը:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՄԵՐՉՂՆԵՍՏՐՈՒՄ

5 Ձարգանում է կրթական հաստատությունների աստատվողում և հավատարմագրման ընթացակարգը: ՌԴ-ի կողմից ազգային բարձրագույն ուսումնական հաստատությունների երրորդ սերնդի չափորոշիչների մշակումից և ընդունումից հետո 2012թ. սկսվեց անցումը դաշնային պետական երրորդ սերնդի կրթական չափորոշիչների իրականացմանը, ներդրվեցին ուսումնական ծրագրերի կրեդիտների ծավալի հաշվառման համակարգը, դիսցիպլինների յուրացման մոդուլային համակարգի օգտագործումը, մասնագիտական լիիրավության ձևավորման ապահովումը:

Կանգ առնենք մեր գլխավոր հիմնախնդիրների վրա: Եվ այսպես, Մերձդնեստրի բարձրագույն կրթության համակարգը զարգանում է Բուլղարիայի գործընթացի արդյունավետ օգտագործման ուղիով, նրա մեխանիզմներով՝ լուծելու համար մեր ազգային խնդիրները կրթության արդիականացման՝ ՌԴ կրթական համակարգի հետ միասնական կրթական տարածքի շրջանակներում: Մենք առանձնացնում ենք կրթություն ամբողջ կյանքի ընթացքում, բարձրագույն կրթության որակի բարձրացում, կրթության և գիտության ինտեգրում, շարժունության

բարձրացում և այլն: Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք խոչընդոտ են դառնում Մերձդնեստրում Բուլղարիայի գործընթացի զարգացման ճանապարհին: Չնայած Մերձդնեստրի բաց լինելու բարձր աստիճանին, արտաքին աշխարհի հետ նրա ինտեգրումը կրում է սահմանափակ բնույթ: Եվ Բուլղարիայի գործընթացի առաջընթացը սահմանափակող գլխավոր գործոնը հանդիսանում է Մերձդնեստրի Հանրապետության իրավական կարգավիճակի չորոշվածությունը, որը սահմանափակում է երկրի կրթական հաստատությունների շրջանավարտների հնարավորությունները, մասնավորապես՝ ակադեմիական և մասնագիտական շարժունության: Ես բարի նախանձով եմ մայում ԼՂ իմ գործընկերներին, ովքեր կարողացել են ստեղծել գործընկերային իրավահավասար հարաբերություններ ԳԴ-ի հետ, որն օգնում է առաջ ընթանալ կրթական այն համակարգի ճանապարհով, որով ինքն է գնում: Որպեսզի հասկանաք, թե ինչ վիճակ է Մերձդնեստրում, պատկերացրեք մի պահ, որ ԼՂ բարձրագույն կրթության դիպլոմների ստացման գործընթացն իրականացնի Արդեշանը: Արդյո՞ք դա հարթ կլինի: Միայն այդ հիմնախնդիրն է այսօր բախվում Մերձդնեստր:

րը: Ցավոք, որպեսզի մենք լեզուլեզուները մեր բարձրագույն կրթության դիպլոմները, առաջին հերթին գործընթաց պետք է իրականացնենք Մոլդովայի Հանրապետության նախարարությունում: Այստեղ դժոխային աշխատանքներ են առաջանում: Համաշխարհային պրակտիկայում փաստաթղթերի լեզուլեզուները երկու ճանապարհ կա, այսինքն՝ գործողությունների իրականացում, որոնք իրավաբանական ուժ են տալիս այդ փաստաթղթերին:

Մոլդովայի Հանրապետությունում մեր փաստաթղթերը լեզուլեզուները փոխարեն իրականացվում է մեր դիպլոմների ճանաչման գործընթաց, այսինքն՝ որպեսզի լեզուլեզուները Մերձդնեստրի փաստաթուղթը, համեմատություն է անցկացվում այն ծավալների ու կրեդիտների միջև, որոնք տվյալ ուղղությամբ ունեն Մերձդնեստր և Մոլդովայի Հանրապետությունը, և փաստաթղթի տեղը պետք է համեմատարբերություններ ժամերի, կրեդիտների և պատրաստավածության ուղղությամբ: Որպես կանոն՝ այդ տարբերությունը ռուսիներենն է, Ռուսիայի պատմությունը, աշխարհագրությունը և այլն, այսինքն՝ այն ազգային բաղադրատարրերը, որոնք տեղ չունեն Մերձդնեստրի Հանրապետությունում:

Իրավիճակը դառնում է այնքան անհեթեթ, որ մեր երեխաների մեծ մասը հրաժարվում է փաստաթղթերի լեզուլեզուները, վերադառնում են սովորելու Մերձդնեստրում կամ էլ ՌԴ-ում: Պետք է ասել, որ միակ երկիրը, որ մեր փաստաթղթերը ճանաչում է առանց լեզուլեզուների, ՌԴ-ն է, որը թույլատրում է մեր դիպլոմների հիման վրա շարունակել հետագա ուսումնառությունը:

Մեծ ուրախությամբ ընդունեցինք մասնակցությունը այսօրվա համաժողովին: Մենք ակնկալում ենք, որ չճանաչված երկրների տարբեր և նման խնդիրների շուրջ կատարվող քննարկումները և դրանց լուծման փորձի փոխանակումը կօգնեն մեզ կրթական փաստաթղթերի լեզուլեզուների և ճանաչման կառուցողական մեխանիզմների որոնման ճանապարհին, ես կան ներդրում կունենան քաղաքացիների կրթության իրավունքի իրացման մեջ և կնպաստեն Բուլղարիայի գործընթացի ակտիվ առաջընթացին: Մենք ելնում ենք այն բանից, որ կարևոր է ոչ թե գործընթացը համուն գործընթացի, այլ գործընթացը՝ հանուն արդյունքների ստացման:

ԱՐԴՅ 241 ՄԱԳԻՍՏՐՈՍՆԵՐ ՍՏԱՅԱՆ ԴԻՊԼՈՍՆԵՐ

Օրերս Ստեփանակերտի մայր բուհում տոնական տրամադրություն էր տիրում, քանզի կարևոր ու սպասված օր էր շատերի համար: Դասիլիճում հավաքված 241 մագիստրոսներ տարիներ շարունակ բուհի դասախոսների կողմից կայուն և հիմնարար գիտելիքներ ստանալուց հետո վերջապես հնարավորություն կստանան ստացած գիտելիքները ներդնել անկախ Արցախի ապագան կերտելու և շենացնելու գործին: Պակաս հպարտ չէր նաև պրոֆեսորադասախոսական կազմը՝ Մանուշ Մինասյանի գլխավորությամբ: Ընդ որ շրջանավարտներից 32-ն այս տարի գերազանցությամբ են ավարտել:

- Ասում են՝ պատանեկության տարիներին ձեռք բերած գիտելիքները հույսի ծաղիկներ են,



որոնք պտուղներ կտան,- մնան գեղեցիկ առաջաբանով միջոցառումը բացեց օրվա հերոսներից Նելլի Դանիելյանը:

- Այո՛, մեր հակառակորդը գինվում է գինտեխնիկայով, իսկ մենք՝ գիտելիքներով՝ համոզված, որ գիտելիքից հզոր ուժ գոյություն չունի,- խոսքը շարունակեց Արայիկը:

Հնչեց ԼՂԳ օրհներգը, որից հետո խոսքը տրվեց ԼՂԳ կրթության և գիտության նախարար Ալվա Ասրյանին, ով հիշարժատ օրվա կապակցությամբ շնորհավորանքի խոսք հնչեցնելուց գատ՝ ԱրԴԳ ռեկտոր Մանուշ Մինասյանի հետ միասին գերազանցակներին հանձնեց դիպլոմները:

Այնքան հպարտություն ու փայլ կար բոլորի աչքերում, քանզի իրենք՝ օրվա հերոսները, այդ բոլոր տարիների ընթացքում գերազանց կատարելով իրենց առջև դրված խնդիրները, այդուհետ արժանիորեն կրելու են ԱրԴԳ մագիստրոսի կոչումը, և նրանցից ակնկալվում է ավելի բարձր գիտական աստիճանի նվաճում և գիտելիքների փոխանցում ապագա սերունդներին:

Վերջում իր շնորհավորանքի ու շնորհակալանքի խոսքը հնչեցրեց ծնող Անահիտ Մետրոպոլիտը, ով բոլոր ծնողների անունից ի արտե շնորհակալություն հայտնեց համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին՝ Մանուշ Մինասյանի գլխավորությամբ, նաև՝ միջոցառման անմիջական կազմակերպիչներին՝ նախադեպ չունեցող միջոցառման համար: Նա շրջանավարտներին մարդեց քաջառողջություն, անափ երջանկություն, անմար ժպիտ և ամենագլխավորը՝ նորանոր ձեռքբերումներ ապագայում:

Կիրա ԴԱՆԱՅԱՆ

Ավարտական միջոցառումներ ՀՐԱԺԵՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԻՆ

Հիրավի, ուսուցիչն այն առանցքն է, որի շուրջ պտտվում է դպրոցում ամեն ինչ, որին ձգտում են նմանվել, որի կատարած յուրաքանչյուր քայլ օրինակ է աշակերտի համար: Առավել ևս՝ եթե այդ աշակերտը դեռ ձևավորման սկզբնական փուլում է:

Գեղեցիկ ավանդույթ են դարձել ուսումնական տարին եզրափակող հրաժեշտի տոները: Նման մի գեղեցիկ հանդես-միջոցառում կազմակերպվեց հունիսի 20-ին, Ստեփանակերտի Խ. 6 հիմնական դպրոցի նախադպրոցական խմբում՝ «Հրաժեշտ նախադպրոցական խմբին» խորագրով, խմբի դաստիարակ վաստակաշատ, հարգված ու սիրված մանկավարժ Ջարուհի Ապրեսյանի ղեկավարությամբ: Բազում փոքրիկների է նա ճանապարհել դեպի առաջին դասարան՝ տալով նրանց տարրական գիտելիքներ, սովորեցրել հաշվել, նկարել, ծեփել, գարգացրել բանավոր խոսքը: Հի եղել մի սերունդ, որը հետագայում մեծ սիրով, հոգու մեծ գործով, հարգանքով չարտահայտվի սիրելի մանկավարժի մասին: Նա կարողանում է իր մեծ սիրուց ու բարությունից անսպառ բաժին հանել բոլորին՝ դրանով իսկ ավելի բարիանալով ու սիրվելով:

Դասաստեղծյակը զարդարված էր տոնականորեն. գույնզգույն փուլիկներ, պատերին փակցված էին սիրելի հեքիաթների հերոսների նկարները, թղթե աղավաղներ, ծաղիկներ: Օդը լի էր տոնական տրամադրությամբ. ամենուր թևածու էին երջանիկ հայացքները, ժպիտները, խիղճն ու ծիծաղը:

Միջոցառումը սկսվեց դաստիարակի ողջույնի խոսքով՝ ուղղված փոքրիկներին, նրանց

ծնողներին, բոլոր ներկաներին: Դրան հաջորդող փոքրիկների խոսքը շատ հուզիչ էր, տպավորիչ, անկեղծ ու տրամադրող: Իրենց տարիքին համահունչ գողտրիկ բանաստեղծություններ դպրոցի, ուսուցիչների, երջանիկ մանկության, աշխատավորության, հայրենիքի, ընթերցասիրության մասին, առանձնապես երբ այդ ամենը հնչում էր թոթովախոս մանկանց բերանից, հուզեցին բոլորին: Միայն թե ինչ ոտանավորներ էին հնչեցնում նրանք.

Թե ուզում ես դառնալ վարպետ, ճարտարապետ, երաժիշտ, կյանքի վագրիչ չմնաս ետ, Կարդա, գիր խնդախիրտ: Առանց ուսման ու գիտության Դու կլինես խեղճ ու թույլ, Ուսումը գեներ է հաղթություն, Նա բաց կանի ամեն դուռ: Երեխաները բեմական հանդերձանքով ներկայացրին «Հովիվի շապիկը» ժողովրդական հեքիաթը, որն ուրախացրեց հանդիսատեսին: Նրանց զարմացրին հեքիաթների, պատմվածքների իրենց իմացությունը: Հանդեսը մի յուրօրինակ ստուգադաս էր տարվա ընթացքում նրանց ստացած նախնական գիտելիքների: Եվ ակնհայտ էր այն մեծ ու տքնաջան աշխատանքը, որը տարվել էր ողջ տարվա ընթացքում՝ նրանց մատաղ հոգիներում:



րում արմատավորելով սերը մարդու, բնության ու աշխարհի հանդեպ: Դաստիարակչուհու ամենամեծ ներդրումը գեղեցիկ ու համերաշխ կոլեկտիվի ձևավորումն էր, որին մեծ աջակցություն էին ցուցաբերել ծնողները: Երեխաները պատրաստ են նոր ուսումնականում հաճախել առաջին դասարան:

Միջոցառումը հազեցած էր երգ ու պարով, որում մեծ ներդրում ունեցրեց երաժշտության ուսուցչուհի Նարինե Թովմասյանը:

Տոնական տրամադրությունը փոխանցվել էր մեզ՝ հանդիսատեսին, մեր հոգիները համակված էին ուրախության ու երախտագիտության զգացումով դեպի մեր երեխաները, դեպի մեր հայրենիքի ապագան:

Սուսաննա ՄՏԵՓՈՒՅԱՆ Սյրեպ. հ. 6 հիմն. դպրոցի փոխպետ

ՄԱՆԿԱԿՊԱՐՏԵԶՈՒՄ

թյամբ: Խմբի աղջիկներից յուրաքանչյուրը մի հսկական ծաղիկ էր: Ներս մտան վստահ, պահի լրջության զգացումով: Տնօրենը երեխաներին, ծնողներին, բոլոր ներկաներին շնորհավորեց օրվա կապակցությամբ: Նշեց, որ ցանկացած հրաժեշտ իրենում ունի տխրություն և ուրախություն: Այս բանաձևում բացառություն չէր: Մանկապարտեզի անձնակազմը հրաժեշտ է տալիս արդեն մի քիչ հասունացած և որոշակի գիտելիքների պաշարով հարստացած սանիկներին ու օրհնանքի իր խոսքն ասում նրանց: Կարևորը՝ որ հետագայում կարողանան իրենց լավ կողմերով դրսևորվել և լիարժեք մարդիկ դառնալ: Սաների համար մանկապարտեզը պայծառ հուշ կննա, և ամենամեծ ցանկությունն էր, որ նրանք միշտ փայլեն իրենց բանիմացությամբ, լինեն ուրախ և երջանիկ:

Երեխաներն արտասանեցին, երգեցին, պարեցին, ցուցադրեցին իրենց գիտելիքների պաշարը, որ հասցրել էին ձեռք բերել սիրելի կրթօջախում: Ներկաներին հիացնում էր երեխաների յուրաքանչյուր ելույթ: Վերջում նրանք ներկայացրին Գ. Թուսանյանի «Կիկոսի մահը» ստեղծագործությունը. զարմանալի վարպետությամբ յուրաքանչյուրը իր դերի մեջ էր, խաղում էին հմտորեն, մեծավարի: Երգերն ու պարերը տարբեր ոճի էին: Ազգայինը միախառնվել էր ժամանակակիցի հետ ու միջոցառումը դարձրել ավելի հետաքրքիր ու գեղեցիկ: Նկատելի էր համախմբված, կոլեկտիվ աշխատանքը թե՛ դաստիարակների և թե՛ պարուսույցի ու երաժշտավարի: Թողովախոս սանիկները նաև իրենց երախտագիտությունը հայտնեցին մանկապարտեզի աշխատողներին, որոնցից յուրաքանչյուրն

իր դերն է ունեցել նրանց դաստիարակման գործում, խոստացան արդարացել սիրելի դաստիարակների սպասումները, լինել հարազատ երկրի ու ժողովրդի արժանի զավակներ:

Իր սանիկներին մայրական օրհնանքի խոսք ասաց դաստիարակ է. Սաղյանը: Մաղթեց միշտ լինել առողջ ու հաջողակ, դառնալ արժանի և հայրենասեր մարդ: Երբեք չմոռանալ առաջին կրթարանը և բոլոր այն մարդկանց, ում սիրով և ուշադրությամբ շրջապատված են եղել այստեղ:

Երեխաներին և դաստիարակներին ուղղված շնորհավորանքի, շնորհակալության և բարեմաղթանքի խոսք ասացին համայնքի ղեկավար Ա. Աղաբեկյանը, դպրոցի ուսուցչուհի տ. Մուսայելյանը, Մարտունու հ. 2 մանկապարտեզի տնօրեն ու Ղ. ճարտարի մանկապարտեզի նախկին դաստիարակ Ռ. Դուկասյանը, երեխաների ապագա դասվար Ռ. Հակոբյանը: Երեխաներն, իրոք, կարողացել էին մի փոքրիկ ու շատ գեղեցիկ տոնական օր պարգևել և արժանի էին գովեստի խոսքերի:

Այնուհետև փոքրիկներին նվերներ հանձնվեցին ճարտարի «Նարինե Աղաբեկյան» ԱՁ տնօրենի և մանկապարտեզի կողմից: Ներկաների սրտերում և շուրթերին այդ պահին մի մեծ ցանկություն էր. թող խաղաղ ու բեմանավոր լինի ձեր ապագան, սիրելի փոքրիկներ, դառնաք արժանի զավակներ մեր բազմաչարքար երկրի, լինեք ավագ սերնդի կողմից ձեզ փոխանցված ավանդույթների ու կրթքների արժանի կրողը, շարունակողն ու պահպանողը:

Կարինե ԴԱՎԱՅԱՆ





ԳՐԱԴԱՐԱԿ

«ԱՐՅԱՆՅԱՆ ԶՎԱՐՃԱԽՈՒՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Գրախոսություն

Շնորհավորանք

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԿՅՈՒ ԲԱՐՉՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ



Երջանիկ ու հպարտ է այն ուսուցիչը, ով իր սաների մեջ կարողանում է տեսնել իրեն՝ գիտելիքներով, բարոյական որակներով և ստեղծագործական հմտություններով ու կարողություններով:

Այդպիսիներին է գործընկերների և ծնողների շրջանում սեր ու հարգանք, հավատ ու վստահություն վայելող, իր սաների համար անփոխարինելի ուսուցիչ, Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի դասվար Ռենա Օհանյանը:

Ծնվել է 1964թ. հունիսի 4-ին, ԼՂ Մարտունու շրջանի Նոր շեն գյուղում: 1981թ. ավարտել է Աշանի միջնակարգ դպրոցը: 1982թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկա» բաժինը և ավարտել 1986թ.:

1986-1991թթ. աշխատել է Աշանի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: 1991-1995թթ. աշխատել է Ստեփանակերտի հ. 7 և հ. 8 միջնակարգ դպրոցներում: 1995-ից առայսօր աշխատում է հ. 5 հիմնական դպրոցում: 2012թ. դասվարների քաղաքային մեթոդիկավորման նախագահն է: Աշխատանքային գործունեության ընթացքում Ռ. Օհանյանն իրեն դրսևորել է որպես հմուտ և բանիմաց մասնագետ, նվիրված մանկավարժ: Մանկավարժությունը նրա համար ամեն ինչից վեր է, ստեղծագործություն է: Նրա յուրաքանչյուր դաս յուրովի է, հագեցած, կյանքի հետ կապված: Նա դասերը վարում է խանդավառությամբ, կիրառում ժամանակակից դասիկներ կայացվող մեթոդներ ու հնարներ, տալիս լրացուցիչ տեղեկություններ: Նրա սաներն ակտիվ են, էներգիայով լեցուն, խոսում են մաքուր հայերենով, գրագետ են, ամեն պահ սպասում են նորի ու գեղեցիկի, որի համար ջանք ու եռանդ չի խնայում սիրելի ուսուցչուհին:

Ռ. Օհանյանը չի պատկերացնում իր կյանքը դպրոցից դուրս և առանց երեխաների: Նա աշխատում է նվիրումով, սիրահարված է իր մասնագիտությանն ու դպրոցին:

Ուսուցմանը զուգահեռ՝ նա կարևորում է նաև իր սաների բազմակողմանի դաստիարակությունը՝ առաջնային համարելով հայրենասիրականը: Այդ են վկայում ուսուցչուհու կազմակերպած տարաբնույթ միջոցառումները, որոնք միշտ անցնում են բարձր մակարդակով ու նպատակային:

Սիրելի՛ գործընկեր, քանի՛-քանի մանկություն են ճանապարհել դեպի լույս, ի՞նչ հուզմունքով ու քնքշանքով, նվիրումով ու սիրով...

Արտի քնքշիկ ինչքան՝ դուր ու հպարտություն են ապրել, երբ տեսել են սաներիդ՝ հայոց այրբեն-գինը արտասանելիս:

Սիրելի գործընկեր, հ. 5 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվը շնորհավորում է հոբելյանդ: Ապրիլ երկար ու երջանիկ: Դու արժանի ես ընթրիխներու երջանկության պտուղները:

Թող գարնան քարմուքայնը լցվի քո ամեն մի օրը, և եթե կյանքն անակնկալներ մատուցի, լինեն միայն հաճելի անակնկալներ:

Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Արցախի բանախյուսական ժառանգությունը բազմաբնույթ ու բազմաժանր է՝ հեքիաթ, մանրապատում, զվարճապատում, գրույց-առակ, ավանդություն, երգ, խաղիկ, բանաձևային-բանախյուսական ստեղծագործություններ՝ հանելուկ, առած-ասացվածք, անեծք-օրհնանք, շուտասելուկ, աղոթք-հմայություն: Բանախյուսական այդ ժանրերը կիրառական միևնույն հաճախակառուցվածքով են ինչպես ժանրային առանձնահատկությամբ, այնպես էլ ժամանակային գործունակ: 1960-70-ական թվականներին բանախյուսական նմուշներում կենսունակ ժանրատեսակ է դառնում գրույց-զվարճապատումը, որը մինչ այսօր էլ պահպանում է իր արդիականությունն ու գործառական ակտիվությունը: Նրանք անփոփոխ են ժողովրդի մտածողությունը, աշխարհընկալումը, պատմությունն ու կենսափիլիսոփայությունը: Զվարճախոսությունները նաև արցախցու հոգու ու մտքի շիտակության ու ազնվասիրտ կերպարի արտացոլանքն են:

Բանախյուսական այս ժանրն այսօր ակտիվորեն «կենցաղավարում» է բանավոր խոսքում, հանրային կյանքում, հաղորդակցական համապատասխան իրադրություններում: Զին, բայց մշտապես հողովվող ու նորոգվող. սա բանախյուսական այս ժանրաձևի բնութագրիչ հատկանիշն է: Իբրև գեղարվեստական ստեղծագործության ժանրատեսակ՝ մշտապես եղել է թե՛ բանասացների ու բանահավաքների և թե՛ անհատ-ստեղծագործողների, գրողների ստեղծագործական հողովություն, դարձել նրանց մտքերի, ապրումների և ընկալումների արտահայտության ձև: Անշուշտ, բանախյուսական այս ժանրի ստեղծագործությունների մի մասը «թափառիկ սյուժեների» մշակում է, և, բնականաբար, կան կրկնվող սյուժեներով հեղինակային տարբեր մշակումներ, բայց և ծնվում են նոր զվարճասացներ ու նոր զվարճախոսություններ:

Արմեն Սարգսյանի նորերս հրատարակած «Արցախյան զվարճախոսություններ» բանախյուսական ժողովածուն արգիսի ստեղծագործությունների համախումբ է ներկայացնում: Ժողովածուն ընդգրկված են շուրջ 600 ստեղծագործություններ՝ 100-ից ավելի խոսվածքներով, որոնք գրառվել ու հավաքագրվել են 1992-2012թթ.:

- Կատարված է 7 խմբային բաժանում՝
- Պղը Պուղուն ազալու-մազալու պինդրան (84 գրույց),
- Գողթուփոցուց ազալու-մազալու պինդրան (103 գրույց),
- Մարտունեցուց ազալու-մազալու պինդրան (176 գրույց),
- Մարտակերտուց ազալու-մազալու պինդրան (128 գրույց),
- Անկարանցուց ազալու-մազալու պինդրան (76 գրույց),
- Ըստեփանակերտուց ազալու-մազալու պինդրան (17 գրույց),
- Շուշվեցուց ազալու-մազալու պինդրան (8 գրույց):

1-ին բաժնում ներկայացվում են Արցախի իմաստունի՝ Մեծն Պղը Պուղու զվարճախոսությունները՝ հայտնի ու նորահայտ, արցախյան տիպական ընդհանրական գծերով. «Աստվածավարի», թե՛ մըրթվարի», «Պուղուն խորուրթը», «Մելիքին շօնը», «Անունը տիմիլիս քըշտեն ը՛ս իլալ», «Պուղուն խօրագյը», «Տըծօխը հըտատ գյուլլա կըքըցի»: Գաղափարական է հեղինակի՝ Պղը Պուղուն

վերագրվող առկա բազում զվարճախոսություններից կատարած ընտրությունը. քաղվել են այնպիսի զվարճախոսություններ, որոնք արցախյան իմաստունի ուղղամիտ, ուղղախոս, բայց և զուսպ, տիրոջը չվարկաբեկող վերաբերմունք են արտահայտում: Սա պատահական չէ և առավելապես ընդգծում է արցախցու թե՛ «դուզեխա» լինելը, թե՛ տիրահարգությունը, թե՛ նույնիսկ տերն անարժան է, ինչը նաև առածով է բանաձևվում՝ «Ուրուշին լավը քեզ չըն տըլան»:

Մյուս 6 բաժիններում՝ ըստ աշխարհագրական բաժանումների՝ Գողթուփ, Մարտունու, Ասկերանի, Շուշիի և Ստեփանակերտի, տրվում են նորագիր ու նորահայտ զվարճապատումներ: Դրանք բնութագրում են այդ շրջանների տարբեր բնակավայրերի մարդկանց: Գեղուսներն իրական մարդիկ են՝ մեծ իմաստունի խոսքաշեն հետևորդները՝ ճշմարտության հարզը ճանաչող ու զնահատող: «Գողթուփոցուց ազալու-մազալու պինդրան» բաժնում արվագաղուկից Բեհիկն է, Կըրիքօր դային, մուլբյուրդընցե՛ Նիկոլ դային, քյօհնաթըլընցե՛ Մեսուպ դային, Սուսբաթը, թըղընցե՛ Զիհանգյի դային, Մարյան աքերը, Միշան, Ավաթը, Վալօղը և այլք: Գողթուփյան խոսք ու բառով հաղորդագրության պատմությունն է հյուսվում, ընդգծվում նրանց օժտվածությունը, սրամտությունն ու առողջ բանականությունը: «Շենին տակը չըվարե», «Խե՛, գյիղա չը՛ք», «Սարքիս դայուն կամպիմենտը», «Կյիմիհրակուճեցե՛ Ալիսան դայուն սուտերան», «Աստուն վեր պախօղ ինար»: Բոլոր այդ զվարճապատումներում հաղորդության բնապատկերն ամբողջանում է հաղորդագրության ապշելի պարզամտությամբ ու մերկ, անսեթևեթ տրամաբանությամբ:

Մարտունու շրջանում ծանոթանում ենք սուխտուրշինացե՛ Ակօփի, քըրթեցե՛ Մելիքի, հիրիհրեցե՛ Ժորիկի, Մամաս դայու, Սուրենի, սուսեցե՛ Սուսբաթ դայու, Կօստի դայու, ճըրտընցե՛ սապօժիգ Վաղօյի, Ծատօրի, հըղուրտեցե՛ Խանլար դայու, Թավաղ դայու, մուշկըպընցե՛ Շահմուրադի, բերդաշենցի Բուրիկի և ուրիշների հետ: Այս բաժնում ընդգրկված զվարճախոսություններում ընդգծվում է մարտունեցիների գոռ կեցվածքը, համառությունը, քաղցր ու հեքիաթասաց լեզուն: Մարտունեցուն բնութագրող ու տիպորոշ են «Քանե դային սաղ ա», «Դուզ չըք անում», «Յընս լըհա էլան վեր կյալի յըմ իլալ», «Վերը բիդի ինի», «Գյուղուն ում, թա ուրուզուն ա», «Դաման վեր հուրուրտընցե՛ ինի» զվարճախոսությունները:

Մարտակերտյան փունջն ամբողջանում է յարմընցե՛ցե՛ Կյալուստի, մարտակերտեցե՛ Մուխու, Առաքելի, սեյսուլանցե՛ Տիկրան դայու, պուղուսակյունընցե՛ Վազգեն անու, Թունի դայու և այլք զվարճագրույցներով: Մարտակերտցիների խոսքն ամբողջանում է և ինքնաբավ համոզականությամբ: Ինքնօրինակ է նաև մարտակերտցու խոսքընկալումը. այդպիսի բնութագրական խոսացումներ են «Թարս գօրծը», «Տընեցե՛ էլ ըն ասուն», «Դաթը ցեմենը ըծընցե՛ք», «Կարօղ ա՛՞ փիս ա ապրուն», «Խարաշօ վանյույէ», «Թօ տուս ըրած հըտաս կյան» զվարճախոսությունները:

Ասկերանի շրջանի «ազալու-մազալու» գրույցների հերոսները ըզըլընցե՛ Մարուսա աքերն է, Կարո դային, խունձուրըսընցե՛ Վարսեհիգյը, դահրավցի Գարիյան Դուկասը, նըրըլյընցե՛ցե՛ Յեղիշը, Ջալալ դային և այլք: Այդ մարդկանց բնորոշ է խոսքի սրությունը,

կտրուկությունը, ինչ-որ տեղ նաև՝ անբավականությունը: Բնութագրական կտորներ են «Ջահիլ նախագան», «Գի՛նչ ասին», «Էտ ջանեն մաչին օխտը փուք զիահար կա» զվարճախոսությունները:

Ստեփանակերտյան խճանկարը ստեղծում են Արտեմ դային, Ավանես դային: Քիչ են ստեփանակերտյան զվարճախոսությունները՝ 17-ը, բայց դրանք դիպուկ բնութագրում են ստեփանակերտցուն. տանտիրոջ կեցվածք ու իշխանություն ունի նա, և նրա խոսքում դա ընդգծվում է, նկատելի է նաև շրջանների տարբեր բնակավայրերից ժամանած մարդկանց հետ հարաբերվելիս: Տիպական կտորներ են «Ըստեփանակերտուց ժողովը», «Յէն ըստըղացե՛ չուն», «Շօփերը ջահիլ տըղա յա», «Թայիին», «Գու անգրագետ չը՛մ մըննան»:

Շուշիի բնատեսքը ներկայացնող շարքն ամենասեղան է՝ 8 զվարճապատում: Դրանք հիմնականում նոր ժամանակի ծնունդ են և արտացոլում են իրականությունը, բնակչության նորովի ընկալումները, մոտեցումները, ձևավորվող հարաբերությունները: Գետաքրքրական են «Յէլած վեր վախտ» և մյուս զվարճախոսությունները: Շուշիում ծանոթանում ենք կյօղ Մամասի և այլք հետ:

Ու սա ոչ միայն այսպես՝ անվանական հիշատակություններով է այս կամ այն բնակավայրի պատկերն ամբողջանում, այլ նաև խիստ ընդգծված գունապատկեր է ստեղծված՝ տվյալ տեղաբնակչության հատկանշային կողմերը զվարճախոսությամբ բնութագրող: Թե՛ աշխարհագրական և թե՛ իմաստային բնութագրումներով լինելով որոշակիորեն սահմանազատված՝ այնուամենայնիվ, դրանք ամբողջապես արտահայտում են արցախցու լեզվամտածողությունը, կենսահայեցությունն ու փիլիսոփայությունը: Ու պատահական չէ, որ տարբեր շրջանների հասցեագրված գրույցներում ընդհանրականությունը միանշանակ առկա է՝ թե՛ նրբմաստային ընդգծումներով, թե՛ կրկնվող սյուժեների տարաշարադրություններում: Գրքի բանագիտական արժեքայնությունը գնահատելի է նաև նրանով, որ խստորեն պահպանված են բանահավաքական աշխատանքին ներկայացվող պահանջները: Վկայված նմուշները գերծ են հեղինակային միջամտությունից: Առկա միջամտությունն էլ մյուսի նկատմամբ դրսևորվող գիտական պատասխանատու միջամտություն է, որից ստեղծագործությունը՝ որպես բանախյուսական նմուշ և բարբառագետի ուսումնասիրության հուսալի աղբյուր, միանշանակորեն շահել է: Ժողովածուին կցված են նաև բանախոսների կենսագրական տվյալները լուսաբանող ծանոթագրություններ և բարբառային, փոխառյալ ու դժվարընկալելի բառերի բացատրական բառարան: Բանագիտորեն արժևորելով ըստ պատշաճի՝ անվիճարկելի է գրքի բարբառագիտական նշանակությունը: Ըստ շրջանների ներկայացվող բնութագրումները հատկապես ընդգծվում ու առավել տեսանելի են դառնում խոսվածքային, հնչարտաբերական առանձնահատկությունների պահպանմամբ: Եթե թեմատիկ ծավալումներում ընդհանրական ակնհայտ երևույթ է, ապա խոսվածքային առանձնահատկություններով այս կամ այն զվարճախոսությունը հասցեագրվում է կոնկրետ շրջանի կամ բնակավայրի, դառնում տվյալ պատումի «անձնագիրը»:

Այս գրքի ծնունդը կրկին փաստում է, որ բանախյուսական այդ ժանրը կենսունակ ու կենսատու է: Եվ որ շատ կարևոր է, հին ու բարի անուններ, կերպարներ ճանաչելի են դառնում, ամրակայվում սերունդների գիտակցության մեջ՝ մշտապես մնալով որպես համեմատությունների, զուգահրությունների և վկայակոչությունների հիմք ու եզր:

Լուսինե ՄԱՐԳԱՐՅԱՆ

<p><b>ԼՈՒՍԱՐԱՐ</b></p> <p>ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ</p>	<p>Գիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ</p>	<p>✉ Ստեփանակերտ, Յ. Թունանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info</p>	<p>Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 09.07.2014թ.:</p>
---	---	--	---	---

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: